

Ուխտագնացութիւն Ղէպի Յորդանան Գետ

29 Յունուար 2006
Երուսաղէմ

Սաղիմահայոց օթօպիւսները, առաջնորդութեամբ Պատրիարք Զօր ինքնաշարժին, Կիրակի, 29 Յունուար 2006ի առաւօտեան ժամը 10ին ժամանեցին Յորդանան գետի ափը ուր տեղի էր ունենալու մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Աբ. Մկրտութեան պաշտօնը նախագահութեամբ նոյնինքն Աբբ. Պատրիարք Զօր:

Աւելի քան 70 տարիներէ ի վեր դադրեցուած այս ուխտագնացութիւնը վերստին վերակենդանացաւ Սաղիմահայ կեանքի մէջ: Ըստ Սրբազան Արիս Շիրվանեանի բացատրութեան, Անգլիացիներու Պաղեստին տիրապետութեան օրօք միջադէպ մը պատճառ դարձած է որ մենք Զայերս կորսնցնենք իրաւունքը տարին անգամ մը այս գետափը օգտագործելու Տիրոջ Աբ. Մկրտման արարողութեան համար, մինչ միւս յարանուանականութիւնները ինչպիսին Յոյները, Լատինները եւ Ասորիները բոլոր շրջանս տիրապետող իշխանութեանց օրերուն շարունակած են իրենց աւանդութիւն - սովորութիւնը պահել ու տարին մի անգամ ժամանած են իրենց տրամադրեալ գետեզերքը ու լաւագոյնս կենդանացուցած են Տիրոջ Աբ. Մկրտման պաշտօնը: Վերջերս, Իսրայէլեան զինուորական իշխանութեանց հետ ձեռք ձգուած կարգադրութեամբ մը անգամ մը եւս վերաստացուած է իրաւունքը օգտագործելու գետեզերքը նկատի առնելով որ Յորդանան Գետը ինքնին Իսրայէլը Յորդանանէ բաժանող սահմանագիծն է եւ որեւէ մօտեցում դէպի գետ սահմանապահ ջրկատներու արտօնութեան եւ հսկողութեան է կարօտ:

Այսուհետեւ, ահա երկրորդ տարին է որ Սաղիմահայ միութիւնները Զ.Օ.Մը, Ե.Ղ.Բ.Մ.ն եւ Զ.Ե.Մ.ը Ս. Աթոռոյ իշխանութեանց համագործակցութեամբ այս ուխտագնացութիւնը կը կազմակերպեն ու 200 հաւատացեալներ կը շրջապատեն Սրբազան Զօր թէ հոգելոր դասուն Յորդանան Գետի ափու պաշտօնին:

Յետ արարողութեան, Սաղիմահայոց օթօպիւսները այցելեցին նաեւ աշխարհիս ամենահին քաղաքներէն մին՝ Երիբովը ու Քրիստոսի Փորձութեան Լերան շրջանը կատարելով վերադարձան Երուսաղէմ:

Մեծամբ մասամբ իր աւանդները թէ սրբութիւնները գունատուած գաղութի զաւակներու փորձն՝ դէպ աւանդութիւն վերադարձի, անցաւ յարաբերաբար յաջող:





Յորդանան Գետը



Քրիստոսի Աբ. Սկրտութեան Պաշտօն



Արք. Պատրիարք Յայրը Աբ. Միւռնույ Կօրինէ Գետը



Սրբ. Պատրիարք Հայրը շրջապատուած Սրբոց Յակոբեանց միաբանութեամբ եւ Սաղիմահայ ուխտաւորներով



Հ.Ա.Ը.Ա.ի ուխտաւորները, ձախւն աջ՝ Աբօն, Յարութը, Զոհրապը եւ Պետիկը